



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՐԴՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ  
 ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Միացեալ Նահանգներու մեր թեմի գեղեցիկ աւանդութիւններէն է, միջ-եկեղեցական յարաբերութեանց ծիրէն ներս, գործակցական սիրոյ այն մթնոլորտը, որ տարիներէ ի վեր կը տիրէ Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ քոյր եկեղեցիներու՝ Հայ, Ղըպտի եւ Ասորի եկեղեցիներու եւ անոնց բարեջան Առաջնորդներուն միջեւ: Անոնք քրիստոնէական փոխադարձ սիրոյ եւ յարգանքի մթնոլորտի մէջ սերտօրէն կը գործակցին եւ միատեղ՝ ժամերգութիւն, աղօթք, սուրբ պատարագ թէ կրօնական, դաստիարակչական, պատանեկան ու երիտասարդական մակարդակներու վրայ օգտաշատ ծրագիրներ կը մշակեն եւ հաւաքներ կը կազմակերպեն, նպատակ ունենալով քրիստոնէական ուղղափառ դաւանութիւնը, եկեղեցական հարուստ անցեալն ու ժառանգութիւնը փոխանցել նոր սերունդներուն եւ ամրապնդել Առաքելական հաւատքը:

Այս ծիրին մէջ, Հինգշաբթի, 17 Յունուարի առաւօտեան ժամը 10:30ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ համատեղ Ս. Պատարագ, նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Միջին Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներուն, յանձինս Հայ Առաքելական Եկեղեցւոյ գոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի, Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի, եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եունին Բափլան Արքեպիսկոպոսի:

Ս. Խորանին կը սպասարկէին Արժ. Տ. Արշակ Ա. Զինյ. Խաչատուրեան եւ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան, ինչպէս նաեւ բարեշնորհ սարկաւազներ: Ս. Պատարագին կը մասնակցէին Միաբան Հայրեր՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Գերպ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Գերպ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, Գերպ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեան, Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան, որ ձեռնհասօրէն վարեց Ս. Պատարագի երգեցողութեան Դպրապետի պաշտօնը: Ներկայ էին յիշեալ չորս առաջնորդութիւններու սահմաններուն մէջ ծառայող բոլոր հոգեւորականները, թիւով շուրջ հարիւր քսան հինգ հոգի:

«Հրաշափառ»ի երգեցողութեամբ, չորս հոգեւոր Առաջնորդները զգեստաւորուած Ս. Խորան բարձրացան եւ համատեղ կատարեցին Ս. եւ անմահ Պատարագը: Ս. Պատարագի ընթացքին, յիշուեցան նաեւ չորս հոգեւոր պետերը՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայոց Հայրապետը, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը, Շնուտա Գ. Պապը, եւ Չաքքա

Պատրիարքը:

Յուզիչ եւ տպաւորիչ էր պատկերը, երբ «Ողջոյն»ի ժամանակ բոլոր հոգեւոր հայրերը Զրիստոսի ողջոյնը եւ սուրբ համբոյրը փոխանակեցին իրարու հետ:

Ս. Զաղորդութեան ժամանակ, ներկայ բոլոր եկեղեցականները, չորս շաբթ կազմած, երկիւղիւ եւ հաւատով մօտեցան եւ չորս հոգեւոր Առաջնորդներուն ձեռամբ հաղորդուեցան Զրիստոսի Սուրբ մարմինով եւ արիւնով:

Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Առաջնորդ Սրբազան Զօր անունով ողջունելէ ետք Զոգեւոր պետերն ու եկեղեցականները, տուաւ օրուան պատգամը, նիւթ ունենալով «Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Զրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Խորհուրդի Տօնախմբութեանց Ս. Գրային եւ Առաքելական Զիմունքներ»: Ան Ս. Գրային եւ Առաքելական դարաշրջանէն փոխանցուած վաւերագրերու եւ եկեղեցական հայրերու վկայութիւնները վկայակոչելով, ամփոփ գիծերու մէջ վեր առաւ Զրիստոսի ծննդեան, մկրտութեան տարբեր թուականներու տեղ տուող պատճառները, աւանդութիւններն ու նորօրեայ պատգամները:

Ս. Պատարագի աւարտին, Թեմիս հիւրընկալ Առաջնորդ Սրբազանը՝ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ամանորի եւ մեր Փրկչին Յիսուս Զրիստոսի Ս. Ծնունդը աւետելով, խաղաղ, պտղաբեր եւ արդիւնաշատ տարի մը մաղթեց առաջնորդներուն եւ բոլոր եկեղեցականներուն:

Արարողութեան աւարտին, հաւաքական խմբանկար առնուեցաւ, որմէ ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Տարբեր եկեղեցիներու հոգեւոր հայրեր սեղանակից եղան իրարու: Բարձրացուեցան բաժակներ եւ առաջարկուեցան սիրոյ կենացներ: Ճաշկերոյթի ընթացքին մայրենի իրենց լեզուներով երգուեցան սուրբ ծննդեան երգեր ու շարականներ: Թեմիս Առաջնորդ Սրբազան Զայրը նկատի ունենալով որ յառաջիկայ Յունիս 7-ին Անթիլիասի Կաթողիկոսարանէն ներս տեղի պիտի ունենայ Ս. Միւռնօրինէք, Առաջնորդներուն նուիրեց Ս. Միւռնի կաթսայի յուշապատկերներ, իսկ բոլոր ներկաներուն՝ Ազգ. Առաջնորդարանի 2008 տարուան օրացոյցներէն եւ Պիքֆայայի Դպրեվանքի պատկերագարող գրքոյկներէն օրինակներ: Ապա հերթով հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Զայրերը իրենց ողջոյնի խօսքը ուղղելու ներկայ եկեղեցականներուն:

Սիրալիր մթնոլորտի մէջ սկսուած հոգեպարար օրը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» երգով եւ «Էջ Միածին» շարականի երգեցողութեամբ:

## **PRELATE HOSTS ANNUAL ORIENTAL ORTHODOX CLERGY CONFERENCE**

On the morning of Thursday, January 17, the Council of Oriental Orthodox Bishops gathered at Holy Cross Cathedral in Montebello to celebrate Divine Liturgy. Participating in the Liturgy were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church.

Assisting the Bishops at the altar were Rev. Fr. Arshag Khatchadourian,

Rev. Fr. Ardag Demirjian, and deacons. Close to 125 clergy from each Diocese participated in the Liturgy, among them Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Baret Yeretjian, Very Rev. Fr. Dajad Yardemian, Very Rev. Fr. Kegham Zakarian, and Very Rev. Fr. Barthev Gulumian.

The Liturgy began with the “Hrashapar” procession leading the four Bishops to the altar. During the service the four spiritual heads of the Churches, H.H. Karekin II, Catholicos of all Armenians, H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, H.H. Pope Shenouda III, head of the Coptic Orthodox Church, and H.H. Patriarch Zakka I, head of the Syriac Orthodox Church, were venerated by the Bishops.

During Holy Communion, clergy from each Diocese approached the altar to receive Communion from their respective Bishops.

Very Rev. Fr. Muron Aznikian welcomed the clergy on behalf of the Prelate after which he gave a lecture on the Feast of the Nativity and Theophany of our Lord Jesus Christ. At the conclusion of the service, the Prelate addressed the clergy wishing them and their Dioceses a prosperous year.

The clergy then headed to Tumanjian Hall where the Prelate and Pastors and Board of Trustees of Holy Cross hosted lunch. During the reception, the Prelate invited the Bishops to offer their remarks. Christmas hymns were also sung by the participants. The Prelate offered his well wishes to all and presented the Bishops and clergy members with a memento.